Հուսիկ Արա

Ուշ աղջիկ

Փափուկ,
լուսավոր
հանգստի գոտի են
մարմնիդ բաց տեղերը,
իսկ ամբողջ մերկությունդ օազիս է
անապատում հոգնածիս համար:

Օրվա բոլոր ժամերը քեզ են բերում ինձ կարծես,
բայց միշտ նույնն է մնում ավազի բարակ շերտը մեր միջև:
Անապատի տեսի՞լք, թե՞ միրաժ ես, տաքուկ խաբկանք,
երբ մոտենում եմ, հեռուն նույնն է,
այդպես երազի խայծն է, կամ լինում է կախարդանքի մեջ:

Ավազների վրա իմ ոտնահետքերն են,
էլի ուրիշ հետքեր՝ քո ոտքերի կեղծումով,
և այլևս տեղ չկա քո քայլերին, ուշ աղջիկ:
Ճանապարհն ինձ խաբել է, թե ամեն եկվոր քո մոտենալն է,
և բոլոր զարդերս նրանց պարանոցին ու ականջներից կախեցի:

Հիմա անապատում կանչողի ձայնն եմ՝
զոնե քեզ համար, չբռնված սեր .
դատարկ եմ ու չունեմ տալու:

Ավազներից վեր սպասումն է քո,
իսկ ավազների տակ ցավն է շարունակվում:
Ուղտեր են անցնում տարտամ քայլերով ու որոճով դանդաղ,
և ես հիշեցի ծարավի մասին,
որ երակներս է խցանել
ու դողում է թոքերիս մեջ .
իսկ հորիզոնում միրաժ է,
մերթ մոտ ու մերթ հեռու տեսիլք: